ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Պարոն Արայիկ Հարությունյանին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Լարիսա Մինասյանից
(դիմողի անուն, ազգանուն)

ք. Երևան, Թումանյան 2-րդ փակուղի, 7/1 տուն
(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)

Բաց Հասարակության Ինստիտուտ Օժանդակության Հիմնադրամ Հայաստան, 286.060.02879
(կազմակերպության լրիվ անվանումը, պետ.գրանցման համարը)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդգրկել Բաց Հասարակության Հիմնադրամներ – Հայաստան կազմակերպությանը ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում Հիմնադրամի ծավալած գործունեության վերաբերյալ:
2. Մոտիվացիոն նամակ՝ հասարակական խորհրդում կազմակերպության ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ:
3. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

Դիմող՝ Լարիսա Մինասյան, ԲՀՀ – Հայաստանի գործադիր տնօրեն
25 մայիսի 2018թ.

Մուտք N 1575770
25 05 2018 թ.

Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան
Թումանյան փողոց 2-րդ փակ. տուն 7/1, Երևան, 375002 Հայաստան • Հեռ/Ֆաքս (374-10) 533862, 536758
• E-mail: info@osi.am • www.osi.am •

Գործադիր տնօրեն
Լարիսա Մինասյան

Տնօրենների Խորհուրդ

Դավիթ Խաչատուրյան
Նախագահ

Ռուբեն Բաբայան
Ինգա Զարաֆյան
Վահրամ Սողոմոնյան
Արտակ Քյուրումյան

25 մայիսի, 2018թ.

ՀՀ կրթության և գիտության նախարար
Պարոն Արայիկ Հարությունյանին

Հարգելի՛ պարոն Հարությունյան,

Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպությունը անցած ավելի քան 20 տարիների ընթացքում շարունակաբար աջակցել է կրթության ոլորտում տարբեր ծրագրերի իրականացմանը, որոնք, ի թիվս այլոց, նպատակաուղղված են եղել բարձրագույն կրթության որակի ապահովման քաղաքականության մշակմանն ու ներդրմանը ՀՀ բուհերում, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանը կրթության և հասարակության մեջ, առարկայական չափորոշիչների մշակմանը, և այլն:

Շարունակելով կարևորել կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունավետությունը, թափանցիկությունն ու բարեվարքությունը, 2013 թվականից ի վեր Հիմնադրամը նախաձեռնել և իրականացրել է մի շարք հետազոտություններ՝ բարձրագույն կրթության և հանրակրթության ոլորտներում իրականացված բարեփոխումների գնահատման նպատակով: Միևնույն ժամանակ, Հիմնադրամը մշտապես ակտիվ մասնակցություն է ունեցել կրթության ոլորտում վարվող քաղաքականության և իրականացվող բարեփումների մշտադիտարկմանը, առաջարկություններով է հանդես եկել քաղաքականության այնպիսի փաստաթղթերի վերաբերյալ, ինչպիսիք են Կրթության մինչև 2030թ. զարգացման ծրագիրը, Բարձրագույն կրթության մասին օրենքի նախագիծը, Կրթության ոլորտում հակակոռուպցիոն ռազմավարությունն ու գործողությունների ծրագիրը, և այլն:

Հաշվի առնելով Հիմնադրամի փորձը կրթության ոլոտում, ինչպես նաև փորձագիտական ու հետազոտական ռեսուրսները, որոնք ստեղծվել են անցած 5-6 տարիների ընթացքում, հավատացած ենք, որ ՀՀ Կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում Հիմնադրամի ընդգրկումը կնպաստի ոլորտի հետագա առաջընթացին ու առկա խնդիրների վերաբերյալ քննադատական դիսկուրսի ստեղծմանն ու զարգացմանը:

Հարգանքով՝

/Լարիսա Մինասյան
Գործադիր տնօրեն

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ

Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան կազմակերպությունը (այսուհետ՝ Հիմնադրամ) մեծապես կարևորում է կրթության բնագավառում (նախադպրոցական կրթություն, հանրակրթություն և բարձրագույն կրթություն) իրականացվող զարգացման ծրագրերում և նախաձեռնություններում, այդ թվում՝ կրթության մասին օրենսդրության բարեփոխումների գործընթացում և բովանդակության մեջ այնպիսի սկզբունքների և արժեքների որդեգրումն ու ամրագրումը, ինչպիսիք են՝ կրթության իրավունքի իրացման հավասար հնարավորությունները՝ բոլորի համար, սոցիալական արդարությունը, բարեվարքությունը, թափանցիկությունը, մասնակցայնությունն ու հաշվետվողականությունը: Ոլորտում իրականացվող ցանկացած նախաձեռնություն կամ ծրագիր պետք է նախևառաջ միտված լինի կրթության որակի բարելավմանն ու որակյալ կրթության համընդհանուր մատչելիության ապահովմանը, համակարգային կոռուպցիայի ու քաղաքականացվածության վերացմանը և համակարգի զարգացմանը՝ համահունչ արդի աշխարհում կրթության զարգացման միտումներին:

Համակարգում փոփոխություններն ինստիտուցիոնալացնելու նպատակով Հիմնադրամը՝ երկար տարիներ ուղղակիորեն աշխատել է կրթական հաստատությունների հետ՝ աջակցելով նրանց քաղաքականության և կրթական բովանդակության մշակման հարցերում և բարելավելով իր հիմնական շահառուների կարողությունները: Այն իր կրթական ծրագրերի շրջանակում տարիներ շարունակ օժանդակել է Հայաստանում բարձրագույն կրթության բարեփոխումների և Բոլոնյան գործընթացի կայացմանը, հանրակրթության և ներառական կրթության բարեփոխումների իրականացմանն ու մի շարք առարկայական չափորոշիչների մշակմանը:

2013թ. Հիմնադրամը դադարեց աջակցել կրթական բարեփոխումներին և նախաձեռնեց մի շարք հետազոտություններ, որոնք գնահատեցին ներկա իրավիճակը կրթության որոշակի բնագավառներում: Այս հետազոտությունները նպատակ են ունեցել գնահատելու բարձրագույն կրթության, հանրակրթության և նախադպրոցական կրթության ոլորտներում իրականացվող բարեփոխումների արդյունավետությունը, հանրակրթության ֆինանսավորման թափանցիկությունն ու արդյունավետությունը, ինչպես նաև համակարգային բարեվարքության հիմնախնդիրներն ու խոչընդոտները: Այս բոլոր հետազոտությունները միասին ապացուցում են, որ առկա է հսկայական հետընթաց կրթական համակարգի որակի, մատչելիության, արդարության և բարեվարքության ոլորտներում: Բարեփոխումների լճացումը վերագրվում է համակարգում արդյունավետ կառավարման, որոշումների կայացման մասնակցայնության, հաշվետվողականության և թափանցիկության բացակայությանը: Ավելին, կրթական համակարգի վրա մեծապես ազդում են երկրում առկա բացասական միտումները մարդու իրավունքների, բաց ժողովրդավարական արժեքների, սոցիալական արդարության և հավասարության, հանդուրժողականության և հակախտրականության ոլորտներում: Երկրում տեղի ունեցող նման զարգացումներն ամրապնդեցին Հիմնադրամի որոշումն այլևս չիրականացնել ուղղակի աջակցության ծրագրեր, այլ հանդես գալ ի պաշտպանություն համակարգում սոցիալական արդարության և

հավասարության, արդյունավետ կառավարման և բարեվարքության, որոնք հավասարապես ազդում են Հայաստանում կրթության որակի վրա:

Հիմնադրամի կրթական ծրագրի նպատակն է հասնել արդարության և կրթական համակարգում խթանել բարեվարքությունը հետևյալի միջոցով՝ ա) հետազոտության և մշտադիտարկման տվյալների ու փաստերի հրապարակում՝ ամենաակնառու բացասական գործելաոճերի վերաբերյալ, բ) հանրային քաղաքականության վերաբերյալ առաջարկների ձևակերպում, գ) կրթության ոլորտի փորձագետների, գիտական համայնքի, համայնքի ակտիվիստների և ծնողական ցանցի ստեղծում, դ) հանդես գալ կրթության զարգացման օրակարգում բարեվարքության, արդարության և որակի սկզբունքների ներմուծման օգտին:

Հիմնադրամի առաջնահերթ ուղղություններն են՝
ա) վճռորոշ հանրային քաղաքականության և մոնիթորինգային ռեսուրսների ստեղծում,
բ) շահերի պաշտպանություն՝ ազգային և միջազգային մակարդակում,
գ) ակադեմիական շրջանակների և քաղաքացիական հասարակության մոբիլիզացիա և կարողությունների զարգացում:

2013թ. իրականացվել է «Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն» խորագրով հետազոտություն և 2015թ.-ին՝ «Կոռուպցիայի դեմ պայքարը և բարեվարքության արմատավորումը Հայաստանի կրթական ոլորտում» վերլուծություն, որոնք արձանագրել են բարձրագույն կրթության ոլորտի զարգացման առավել էական և ռիսկային խոչընդոտները, ինչպիսիք են՝ համակարգի նկատմամբ քաղաքական վերահսկողությունը, ակադեմիական անկախության սահմանափակումը և շահերի բախումները բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման մարմիններում:

2013-2015թթ. Համայնքների ֆինանսիստների միավորում ՀԿ կողմից իրականացվել են մի շարք վերլուծական հետազոտություններ, որոնք բացահայտել են հանրակրթության ֆինանսավորման ոլորտում առկա խնդիրները, ըստ աշակերտների թվի ֆինանսավորման մեխանիզմի անկատարությունները, ավագ դպրոցների ֆինանսավորման անարդյունավետությունն ու հանրակրթության ֆինանսավորման այլ խնդիրներ: Զուգահեռաբար, մի շարք քաղաքականության կրթաթոշակառուկների կողմից՝ Հիմնադրամի օժանդակությամբ, ուսումնասիրվել են ներառական կրթության իրականացման և ֆինանսավորման արդյունավետության հետազոտություններ: 2014-2015թթ. Հիմնադրամի օժանդակությամբ և ՏԶՀԿ մեթոդաբանությամբ միջազգային փորձագիտական խմբի կողմից իրականացվել է Հայաստանի կրթության ոլորտում բարեվարքության ուսումնասիրություն, որը, անդրադառնալով մինչ այդ իրականացված բոլոր հետազոտական զեկուցներում բարձրացված խնդիրներին, դրանք ամփոփեց և գնահատեց համակարգը՝ բարեվարքության և կոռուպցիայի տեսանկյունից: Հետազոտության շրջանակում դուրս բերվեցին և վերլուծվեցին հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտներում բարեվարքության ամրապնդման վրա ազդող գործոններն ու կոռուպցիոն ռիսկերը:

2018թ. Հիմնադրամը ներկայացրեց Բարձրագույն կրթության մասին ՀՀ օրենքի նախագծի, Կրթության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի, կոռուպցիոն ռիսկերի դասակարգման և հակակոռուպցիոն արդյունավետ գործողությունների ծրագրի մշակման, Կրթության ոլորտում հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի, ՀՀ կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին ՀՀ օրենքի ծրագրի և

Կրթության մինչև 2030 թվականը զարգացման ճանապարհային քարտեզի վերաբերյալ առաջարկությունների ամբողջական փաթեթները:

Հիմնադրամը շարունակաբար կազմակերպում է տեղական և միջազգային փորձագետների հետ հանդիպումներ, ինչպես նաև հանրային քննարկումների շարք՝ նվիրված կրթության ոլորտի խնդիրներին: Այն շարունակում է նաև ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղված համայնքային գործընկերների հետ համագործակցության ընդլայնմանն ու զարգացմանն ուղղված նախաձեռնությունները և տրամադրում փոքր դրամաշնորհներ, որի նպատակն է խթանել կրթության ոլորտում սոցիալական արդարության և հավասարության, կրթության որակի ու հասանելիության շուրջ պահանջատիրական վերաբերմունքի ձևավորումը: Այս նախաձեռնության նպատակն է նաև հանրակրթության ոլորտում ձևավորել շահառուների ազդեցիկ խումբ՝ զարգացնելով ինչպես այլընտրանքային ծնողական խմբերն ու հարթակները, այնպես էլ ուսումնական հաստատություններում գործող ծնողական խորհուրդները:

Հիմնադրամը «Քաղաքականության կրթաթոշակներ» ծրագրի շրջանակներում աջակցում է հետազոտողներին, ովքեր պատրաստակամ են իրականացնել առաջադեմ ուսումնասիրություններ հանրային քաղաքականության տարբեր բնագավառներում, այդ թվում՝ կրթության բնագավառում, բացահայտելու բաց հասարակության առջև ծառացած առավել հրատապ մարտահրավերները և մշակել կիրառական լուծումներ:

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

ՀԱԿԻՐԱ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վարջին երեք տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության նախորդ կառավարության վերջին տարիների ծրագրերում մշտապես ընդգծվել են կրթության միջոցով երկրի հավասարաչափ զարգացման, կրթության ոլորտում հավասարության խթանման, կրթության որակի բարելավման, սոցիալական արդարությանն ու ներառմանն ուղղված այլընտրանքային լուծումների մշակման, կրթության համակարգի ապաքաղաքականացման ու կոռուպցիայի հաղթահարման առաջնահերթությունները: Սակայն, գործնականում իրականացվող տարաբնույթ բարեփոխման ծրագրերն ու նախաձեռնությունները տեսանելի ու չափելի ազդեցություն չեն ունեցել կրթության որակի բարելավման, կրթության ոլորտում սոցիալական արդարության հաստատման և համակարգային կոռուպցիայի ու քաղաքականացվածության հաղթահարման վրա: Ավելին, ռեսուրսների բաշխման ու տնօրինման վերաբերյալ որոշումները մեծամասամբ կայացվել են ոչ մասնակցային և ոչ թափանցիկ եղանակով՝ նախապատվություն տալով հանրակրթության էլիտարացմանը հանգեցնող գերազանցության կղզյակների ստեղծմանն ու զարգացմանը:

Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպությունը (այսուհետ՝ Հիմնադրամ) տարիներ շարունակ իրականացնում և օժանդակում է Հայաստանի կրթության ոլորտում տարաբնույթ հետազոտությունների, գնահատումների և քաղաքականության ուսումնասիրությունների իրականացմանը, որոնք նպատակ ունեն քանակական և որակական համակողմանի մեթոդների կիրառմամբ վերհանել համակարգում առկա խնդիրներն ու մշակել դրանց լուծմանն ուղղված այլընտրանքային առաջարկություններ: Մինչ օրս Հիմնադրամի աջակցությամբ իրականացված հետազոտություններն անդրադարձել են Հայաստանի հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտներում որակի, բարեվարքության, ինչպես նաև հավասարության և սոցիալական արդարության խնդիրներին: Առանձին անդրադարձ է կատարվել նաև ավագ դպրոցների և 12-ամյա կրթության որակի, մատչելիության և հասանելիության, ուսուցիչների կարողությունների և կրթության բովանդակության, ինչպես նաև ներառական կրթության իրականացման արդյունավետության գնահատմանը:

Հիմնադրամի օժանդակությամբ 2012-2017թթ. ընթացքում տեղական և միջազգային կազմակերպությունների և անհատ փորձագետների կողմից իրականացված բոլոր հետազոտական նախաձեռնությունների արդյունքների հիման վրա, Հիմնադրամն առանձնացնում է, հայաստանյան կրթական համակարգի առջև ծառացած առավել հրատապ հետևյալ մարտահրավերները՝

1. Կրթության ոլորտում աճող սոցիալական անարդարությունն ու պարտադիր անվճար հանրակրթության էլիտարացումը՝ ի հաշիվ գերազանցության կենտրոնների աջակցության կառավարության քաղաքականության: Այս ամենի արդյունքում որակյալ հանրակրթությունը հետզհետե դարձել է անմատչելի գյուղաբնակ երեխաների, ինչպես նաև սոցիալապես խոցելի ընտանիքներում ապրող աղջիկների ու տղաների համար:

2. Համակարգային կոռուպցիան և քաղաքական վերահսկողությունն ու միջամտությունը՝ կրթական հաստատությունների կառավարմանը, ինքնավարությանն ու մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացներին:
3. Կրթության որակի շարունակական անկումը, ինչի մասին են վկայում Հայաստանի ցուցանիշները՝ միջազգային հեղինակավոր ստուգատեսներում, ինչպես նաև դրանց քողարկմանն ու չհանրայնացմանն ուղղված պետության քաղաքականությունը: Կրթության բովանդակության և դասավանդման գործընթացի ռազմականացումն ու կրոնականացումը, ինչի արդյունքում խեղաթյուրվում է կրթության աշխարհիկության սկզբունքը ու սահմանափակվում է երեխաների մոտ քննադատական ու ռեֆլեկտիվ մտքի զարգացումը:

Կրթության համակարգում սոցիալական արդարության, անհավասարության և բևեռացման խնդիրը տարբեր ձևով է ընկալվում այն խորությամբ ուսումնասիրած հետազոտողների ու քաղաքացիական հասարակության համայնքի և կառավարության ու որոշում կայացնողների կողմից: Խոսելով կրթության մեջ անհավասարության և սոցիալական արդարության բացակայության մասին, մենք նախ և առաջ թիրախավորում ենք հանրակրթության ոլորտը: Բարձրագույն կրթության մեջ նույն խնդրի բացասական հետևանքը արդյունք է հենց հանրակրթության մեջ անհավասարության ու սոցիալական բևեռացման, ինչպես նաև մի շարք այլ պատճառների ևս:

Պաշտոնական վիճակագրությունը, ուսումնասիրություններն ու հետազոտությունները վկայում են այն մասին, որ որակյալ հանրակրթությունը հատկապես անմատչելի ու անհասանելի է երկու խմբերի՝ աղքատ ընտանիքներում և գյուղական բնակավայրերում ապրող երեխաների, համար: Որակյալ կրթությունը հավասարապես մատչելի չէ նաև աղջիկների համար այնպես, ինչպես տղաների: Այնուամենայնիվ, այստեղ կուզենայինք առավել հանգամանորեն անդրադառնալ աղքատ ընտանիքներում և գյուղական բնակավայրերում ապրող երեխաների կարիքներին, քանի որ այստեղ է, որ անհրաժեշտ է որոշում կայացնողների և պատասխանատու գերատեսչության կողմից խնդրի համապարփակ ընդունումը: Մեր կարծիքով կրթության բնագավառում նախկին կառավարության օրոք տարվող քաղաքականությունը միտված է եղել էլ ավելի սրելու առկա խնդիրը՝ փոխարենը մեղմելու և լուծելու այն:

Ըստ Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալների 2016թ. ավագ դպրոցներում ծայրահեղ աղքատների ու աղքատների ընդգրկվածությունը եղել է 54-61%, մինչդեռ ոչ-աղքատ ընտանիքների երեխաների ընդգրկվածությունը եղել է 69%: Բացի դրանից, նույն տարում բարձրագույն կրթության մեջ ընդգրկվածությունը՝ նույն խմբերի համար, եղել է համապատասխանաբար 17-34% (ծայրահեղ աղքատների և աղքատների) և 50% (ոչ-աղքատ): Այս վիճակագրությունը վկայում է այն մասին, որ աղքատ և ծայրահեղ աղքատ ընտանիքների երեխաները, գրեթե 3 անգամ ավելի քիչ հնարավորություն ունեն շարունակելու կրթությունը՝ հանրակրթությունից հետո:

Նույն աղբյուրի համաձայն, միջնակարգ և ավելի ցածր մակարդակի կրթություն ունեցող մարդկանց աղքատության մակարդակը տատանվում է 33-41% միջակայքում, մինչդեռ բարձրագույն կրթությամբ բնակչության միայն 17%-ն է աղքատ: Ուստի, ավելի քան կարևոր է դեռևս հանրակրթության մակարդակում երաշխավորել որակյալ կրթության հավասար ու արդարացի հասանելիությունն ու մատչելիությունը՝ բոլոր երեխաների

համար: Սա հետագայում նրանց հնարավորություն կտա բարելավել իրենց կյանքի որակն ու հաղթահարել սոցիալական բարեկեցության նվազագույն շեմը:

TIMSS ստուգատեսի 2003-2015թթ. հայաստանյան արդյունքների համեմատական վերլուծությունը[1] վկայում է այն մասին, որ կրթության ոլորտում անհավասարությունն ու սոցիալական անարդարությունը աճել է 2015թ.-ին՝ 2003թ. համեմատ: Սոցիալապես ավելի ապահովված ընտանիքներում ապրող երեխաները անհամեմատ ավելի բարձր արդյունքներ են ցուցաբերել ստուգատեսում, քան սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաները: Տարբերությունը մաթեմատիկայի արդյունքներում 2015թ. կազմել է 20.25%՝ 2003թ. 15.67%-ի համեմատ, իսկ բնագիտական առարկաների դեպքում 20.88%՝ 14.97%-ի համեմատ: Նույն վերլուծությունը ցույց է տալիս, որ գյուղական բնակավայրերի աշակերտները մաթեմատիկայի և բնական գիտությունների ստուգատեսներում ևս ավելի ցածր արդյունքներ են ցուցաբերում քան իրենց քաղաքաբնակ հասակակիցները: Տարբերությունն այս դեպքում կազմում է 2015թ. 35.57%՝ 2003թ. 25.23%-ի համեմատ (մաթեմատիկա) և 24.5%՝ 2003թ. 23.30%-ի համեմատ (բնական գիտություններ): Այսպիսով, սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաները և գյուղաբնակ երեխաները հանրակրթական համակարգում ցուցաբերում են ակադեմիական ավելի ցածր գիտելիքների, ինչը անխուսափելիորեն անդրադառնում է նրանց կրթական և տնտեսական հնարավորությունների վրա՝ ավելի հասուն տարիքում:

Այս խնդրի առնչությամբ կարևորում ենք, որպեսզի ԿԳՆ-ը ոչ միայն ընդունի խնդրի առկայությունը, այլ նաև վերանայի տվյալ խնդրի լուծմանն ուղղված ընթացիկ ծրագրային քաղաքականությունը՝ նախաձեռնելով իրապես գործուն և կարճ ժամանակում համակարգային լուծում պարունակող նոր գործողություններ, ծրագրեր ու միջոցառումներ: Մասնավորապես կարևորում ենք պետական բյուջեի միջոցների հաշվին կրթության գերազանցության ծրագրի ֆինանսավորման դադարեցումը, ինչպես նաև ֆինանսական և այլ ռեսուրսների արդյունավետ բաշխման քաղաքականության մշակումը՝ հիմնվելով ՏԶՀԿ լավագույն փորձի վրա: Կարևորում ենք նաև հնարավորինս կարճ ժամանակահատվածում տարբեր ընթացակարգերի ու մեխանիզմների մշակումն ու ներդրումը, որոնք հնարավորություն կտան նվազեցնել և, այնուհետև, հաղթահարել համակարգում առկա անհավասարությունն ու սոցիալական անարդարությունը:

Անհապաղ լուծման ենթական հաջորդ խնդիրը կրթության ոլորտի քաղաքականացվածությունն ու գործադիր իշխանությունների անհարկի վերահսկողությունն ու միջամտությունն է՝ կրթական հաստատությունների կառավարման և որակի նկատմամբ: Այստեղ կրկին խնդիրը ոչ միայն բարձրագույն կրթության կառավարման, այլ նաև հանրակրթական դպրոցների կառավարման խորհուրդների քաղաքականացվածության և վերահսկելիության մեջ է:

Դպրոցների կառավարման խորհուրդների կազմավորման և գործունեության ներկայիս օրենսդրական կարգավորումը չի պարունակում այս մարմինների գործունեության մեջ շահերի բախումը սահմանափակող դրույթներ: Արդյունքում, դպրոցների կառավարման խորհուրդներում ընդգրկվում են տվյալ դպրոցի վարչական աշխատողներ, կամ տնօրենի ազգական/ծանոթներ: Որպես հետևանք, խորհրդի գործունեությունը դառնում է ֆորմալ և ոչ արդյունավետ: Խնդիրը համակարգային է և լուծումներն էլ պետք է լինեն համակարգային, այլ ոչ անհատների մակարդակում: Անհրաժեշտ է հրատապ կերպով ստեղծել մեխանիզմներ, որոնք կապահովեն կրթական հաստատությունների

[1] TIMSS 2003/2015, Daniel Caro and Jia He, 2018, OSFA.

կառավարման ու որակի ապահովման մարմինների, մարդկային ռեսուրսների կառավարման, աշխատանքի ընդունման, գնահատման ու ազատման գործընթացների անկախությունը, հաշվետվողականությունն ու թափանցիկությունը:

Հիմնադրամի դիրքորոշման համաձայն անհրաժեշտ է վերանայել հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ձևավորման կարգը և համակազմը՝ նախապատվություն տալով կառավարման խորհուրդների նաև և առաջ ծնողների ներգրավվածության թվի աճին, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատության մանկավարժական համակազմի ներկայացվածությանը: Անհրաժեշտ է նաև նվազեցնել դպրոցների կառավարման խորհուրդներում լիազոր մարմնի և տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացվածությունը մինչև 1 հոգի, ինչպես նաև մշակել խոշորացած համայնքներում, ինչպես նաև փոքր համակազմ ունեցող և/կամ բարձր լեռնային վայրերում տեղակայված բնակավայրերի դպրոցների կառավարման խորհուրդների ձևավորման տարբերակված մոտեցումներ ու ընթացակարգեր:

Կարևոր ենք համարում նաև ընտրական գործընթացներից դպրոցներին զերծ պահելը: ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ է արգելել ընտրատեղամասերի տեղակայումը կրթական հաստատությունների տարածքներում, ինչը կնվազեցնի քաղաքականացված տնօրենների վրա ճնշումներն ու քաղաքական նպատակներով իշխանության չարաշահումների դրսևորումները: Վացի այդ, անհրաժեշտ է արգելել նաև հանրակրթական դպրոցների տնօրեններին, մանկավարժական աշխատողներին և վարչական աշխատակազմին, ինչպես նաև մանկապարտեզների տնօրեններին, դաստիարակներին, մանկավարժական աշխատողներին և վարչական աշխատակազմին ներգրավվել ընտրական հանձնաժողովներում՝ որևէ կարգավիճակով:

Բարձրագույն կրթության ոլորտում կարևոր ենք համարում հանրային բուհերի կառավարման խորհուրդների ներկայիս կազմերում Կառավարության (25%) և ԼԳՆ (25%) ներկայացուցիչների լիազորությունների անհապաղ դադարեցումը և նրանց փոխարինումը նոր ներկայացուցիչներով:

Հաջորդ կարևորագույն խնդիրը, որի լուծումը չպետք է հապաղի, դա Բարձրագույն կրթության մասին օրենքի նախագծի լրամշակումն է: Մասնավորապես, նախագծում պետք է վերանայվեն այն դրույթները, որոնք անդրադառնում են բուհերի կառավարման համակարգում քաղաքական վերահսկողության ու միջամտության, բուհերի ինքնավարության և հաշվետվողականության, շահերի բախման, կոռուպցիայի, կրթության որակի, ակադեմիական բարեվարքության և ակադեմիական ազատության խնդիրներին:

Որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) կառավարման խորհուրդը պետք է լինի անկախ, մինչդեռ խորհդի կազմում ընդգրկված են քաղաքական կուսակցության անդամներ և Կառավարության ներկայացուցիչներ: Ըստ Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) չափանիշների (ՈԱԱԿ-ը ENQA-ի անդամ է)՝ բուհերը և նրանց հավատարագրման գործակալությունները պետք է լինեն անկախ և գործեն ինքնուրույն՝ առանց երրորդ կողմի ազդեցության, այդ թվում՝ Կառավարության: Այսպիսով, առաջարկում ենք դադարեցնել ՈԱԱԿ-ի կառավարման խորհրդի ներկայիս կազմի գործունեությունը և ձևավորել նոր խորհուրդ ՝ բացառելով Կառավարության և որևէ քաղաքական կուսակցության ներկայացուցիչների ներգրավվածությունը:

Կարևոր ենք համարում նաև բուհերի որակի ներքին ապահովման և ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրման գործընթացները՝ ընթացակարգը, քաղաքականությունն ու ռազմավարությունը: Այդ թվում առաջարկում ենք մշտադիտարկել որակի ապահովման համակարգի կազմակերպման կառուցվածքը, որակի վերահսկման, վերլուծության և ապահովման համար պատասխանատու ստորաբաժանումների, հանձնախմբերի ու խորհրդի գործունեությունն ու կատարած աշխատանքը:

Հիմնադրամը լրջագույն խնդիր է տեսնում պետական բյուջեից կրթության ոլորտի ֆինանսավորման ծավալների շարունակական կրճատման մեջ: Կրթության զարգացման 2011-2015թթ պետական ծրագիր օրենքի համաձայն 2015թ-ին նախատեսվում էր պետական բյուջեից կրթությանը հատկացվող միջոցները հասցնել ՀՆԱ-ի 4%-ի: Սակայն օրենքի այս դրույթը այդպես էլ կյանքի չկոչվեց: Ավելին, կրթությանը հատկացվող ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում շարունակաբար նվազում է, իսկ 2018-2020թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի կանխատեսումների համաձայն, Հայաստանում առաջիկա տարիներին այն էլ ավելի կնվազի:

ՀՆԱ-ում կրթությանը հատկացվող բյուջետային միջոցների նվազմանը զուգահեռ նախորդ կառավարությունը փոփոխության է ենթարկել նաև այդ ծախսերի ներքին կառուցվածքը: Տարեցտարի ավելացել է թանկարժեք ու ծախսատար ծրագրերի ֆինանսավորումը, որոնց ավելացված արժեքն ու դրական ազդեցությունը համակարգի համաչափ զարգացման վրա, առնվազն կասկածելի են ու ոչ տեսանելի: Այսպես, 2014թ. կրթության պահուստային ֆոնդից՝ Կառավարության որոշմամբ, մոտ 238 մլն դրամ հատկացվեց Կրթության զերազանցության ծրագրի իրականացմանը, որն այնուհետ, մյուս տարիներին իր հաստատուն տեղը գտավ կրթության ոլորտի ծախսերում: Այս ծրագրի իրականացման համար, յուրաքանչյուր տարի պետական բյուջեից հատկացվում է ավելի քան 1 մլն. ԱՄՆ դոլարին համարժեք ֆինանսավորում: Սակայն, ծրագրի արդյունավետությունը, համակարգի բարելավման տեսանկյունից, մինչ օրս տեսանելի չէ: Նմանապես, յուրաքանչյուր տարի պետական բյուջեից մոտ 800 մլն. ՀՀ դրամ հատկացվում է դպրոցների ցանցի և ինտերնետ կապի ապահովման ու սպասարկման ծախսերին: Այս գումարներն ուղղվում են մասնավոր ընկերությանը (UCom), սակայն տրամադրված ծառայությունների որակն որևէ կերպ չի վերահսկվում: Դպրոցների մշտադիտարկումն ու ուսուցիչների և տնօրենների հետ առանձին զրույցները վկայում են, որ առկա ինտերնետային կապը շատ հաճախ թույլ թի տալիս նույնիսկ ներբեռնել փոքրածավալ փաստաթղթեր: Իսկ այն մասին, որ ինտերնետային կապի ծառայությունները կարող են և պետք է լայնամասշտաբ կիրառվեն դպրոցի ուսումնական գործընթացում, խոսք անգամ լինել չի կարող:

Կրթության շարունակաբար անկում ապրող որակի մասին բազմիցս առիթ ենք ունեցել բարձրաձայնելու: Այս կապակցությամբ գտնում ենք, որ անհրաժեշտ է կիրառել այլընտրանքային մոտեցումներ՝ ցածր առաջադիմություն ունեցող երեխաների կրթական ցենզը ամառային արձակուրդների ընթացքում բարելավելու նպատակով: Բացի դրանից, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման հիման վրա կարևորում ենք առաջադիմության գնահատման համակարգի բարեփոխումն այնպես, որ բացառվի գնահատականների առուվաճառքը, կրկնուսուցումը՝ հանուն բարձր գնահատականների, և այլն:

2018թ. սկզբին Համաշխարհային Բանկի Կրթության բարելավում վարկային ծրագրի շրջանակում հայտարարվել էր հանրակրթության կրթակարգի և առարկայական

չափորոշիչների վերանայման մրցույց: կարևոր ենք համարում, որպեսզի չափարոշիչների վերանայման գործընթացը սկսելուց առաջ նաև մշակվեն և կառավարության որոշմամբ հաստատվեն հանրակրթության կրթակարգի և չափորոշչի, առարկայական չափորոշիչների մշակման սկզբունքներն ու չափանիշները՝ հիմք ընդունելով կրթության որակի բարելավման, կրթական բովանդակության մեջ գենդերային, կրոնական և այլ հատկանիշներով ոչ զգայուն նյութերի ու բովանդակության բացառման, կրթության կրոնականացման ու ռազմականացման բացառման առաջնահերթությունները՝ ելնելով ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից: Այս սկզբունքների ընդունումից հետո միայն կարելի է վերսկսել հանրակրթության կրթակարգի ու չափորոշիչների վերամշակման գործընթացը՝ ՀԲ վարկային ծրագրի շրջանակում:

Անհրաժեշտ ենք համարում նաև փորձաքննության ենթարկել հանրակրթական բոլոր առարկաների դասագրքերն ու այլ մեթոդական նյութերը՝ ստուգելով դրանց համապատասխանությունը վերոհիշյալ սկզբունքներին ու չափանիշներին: Բոլոր դասագրքերն ու մեթոդական նյութերը, որոնք հակասում են հաստատված սկզբունքներին ու չափանիշներին, պարունակում են որևէ հատկանիշով խտրականություն պետք է անհապաղ հանվեն շրջանառությունից:

Հանրակրթության ավագ մակարդակում կրթության որակի բարելավման և համահարթեցման նպատակով անհրաժեշտ է նաև համահարթեցնել բոլոր հանրակրթական դպրոցների ավագ մակարդակում կրթության կազմակերպման չափանիշներն ու չափորոշիչները՝ երաշխավորելով հոսքային և ենթահոսքային որակյալ կրթության հասանելիությունը ավագ դպրոցի տարիքի բոլոր սովորողների համար, ներառյալ ավագ մակարդակի կրթության ֆինանսավորման մեխանիզմի համահարթեցում:

Նախադպրոցական կրթության բնագավառում կարևորում ենք հետևյալ գործողությունները՝

1. Նախադպրոցական կրթության ավագ՝ 5-6, տարիքային խումբը օրենքով սահմանել որպես պարտադիր բոլոր երեխաների համար: Ապահովել պետական բյուջեից բոլոր համայնքներում տվյալ տարիքային խմբի նախադպրոցական կրթության ֆինանսավորումը:
2. Վերանայել և լրամշակել նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը՝ ապահովելով սահուն անցումը նախադպրոցական կրթության ավագ պարտադիր մակարդակից հանրակրթության տարրական մակարդակ:
3. Հիմք ընդունելով Երևան քաղաքի մոդելը՝ մշակել մարզային և գյուղական պետական նախադպրոցական կրթական հաստատությունների (մանկապարտեզների) ֆինանսավորման և ծնողների համար դրանք անվճար դարձնելուն ուղղված կարգ:
4. Երևան քաղաքում գործող «Մանկապարտեզ-հերթագրում» էլեկտրոնային համակարգը ներդնել հանրապետության մյուս բոլոր քաղաքներում: Համակարգը առցանց հասանելի և թափանցիկ դարձնել բոլոր ծնողների համար՝ Երևանում և մարզերում: Բացի դրանից, Երևան քաղաքում բնակվող, սակայն մարզային գրանցում ունեցող ծնողների երեխաների համար երաշխավորել անվճար նախադպրոցական կրթություն՝ Երևան քաղաքի պետական մանկապարտեզներում: